ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 հոկտեմբերի 2012թ. թիվ 195-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի ԹԻՎ 157-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. հունվարի 30-ի թիվ 134-Ն որոշմամբ հաստատված «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգի» 5-րդ կետի և ՀՀ Լոռու մարզպետի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2012 թվականի հիմնական միջոցառումների պլանի», ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով, հաշվի առնելով ՀՀ ԱԻՆ փրկարարական ծառայության օպերատիվ կառավարման վարչության պետի 01.10.2012թ. թիվ 01/1036-Ն գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. 2012թ. հոկտեմբերի 25-ին Լոռու մարզում իմ ղեկավարությամբ անցկացնել շտաբային ուսումնավարժություն «Հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով:

2. Ուսումնավարժությանը ժամանակին նախապատրաստվելու և արդյունավետ անցկացնելու նպատակով ստեղծել ուսումնավարժության ղեկավար կազմ, ղեկավարման շտաբ և շտաբի աշխատանքային խմբեր՝ հետևյալ կազմերով.

1) Ուսումնավարժության ղեկավար կազմ՝

ՇՈՒԽ-ի ղեկավար – ՀՀ Լոռու մարզպետ, մարզի ՔՊ պետ Ա. Նալբանդյան.

ՇՈՒԽ-ի ղեկավարման շտաբի պետ - մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Հ. Անտոնյան.

ՇՈՒԽ-ի ղեկավարի տեղակալներ - ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Ա. Դարբինյան, ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ, մարզի տարահանման հանձնաժողովի նախագահ Վ.Ասատրյան:

2) Ուսումնավարժության ղեկավարման շտաբի աշխատանքային՝ խաղարկման, վերլուծման և ամփոփման նախապատրաստման, միջնորդական խմբեր՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

3. Հաստատել միջնորդական խմբին կցված մասնակիցների ցանկը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

4. ՈՒսումնավարժությունում ընդգրկել.

Լոռու մարզի տարահանման հանձնաժողովին, մարզային ՔՊ ծառայություններին, Լոռու մարզային փրկարարական վարչությանը, ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի մարզային կազմակերպություններին, Վանաձոր համայնքի ՔՊ կազմավորումներին, ՀՀ ՊՆ թիվ 3 բանակային կորպուսի և Վանաձորի զինկոմիսարիատի ներկայացուցիչներին:

5. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Հ. Անտոնյանին՝

1) ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և ներկայացնել հաստատման.

2) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավվող պաշտոնատար անձանց նախապատրաստումը համաձայն հաստատված օրացուցային պլանի.

3) ապահովել համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ ուսումնավարժության անցկացման հարցերում.

4) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել հոկտեմբերի 15-ին:

6. Ուսումնավարժության մասնակիցներին՝

ա) ճշգրտել համապատասխան պլանները:

բ) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

7. Մարզի ՔՊ համակարգի պատրաստականության բերման ուղղությամբ գործնականորեն միջոցառումներ չիրականացնել:

8. Սույն որոշումը տրամադրել ուսումնավարժության մասնակիցներին:

9. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

10. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2012 թվականի օգոստոսի 28-ի «Լոռու մարզում շտաբային ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման մասին» թիվ 157-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. հոկտեմբերի 2
ք.Վանաձոր